յապաղեցին ցոյց տալ իրանց հետևանքները։ Ինչպէս և պէտք էր սպասել Վատիկանին արած զիջումները դուր չեկան պահպանողականներին, և մանաւանդ „օրթոդոքսային“ աւետարանական հոգևորականութեան կուսակցութեանը։ Այդ կուսակցութիւնը մինչև այժմ համբերութեան դիմակ էր կրում, և նրա օրգանները շատ անգամ պախարակում էին թէ „կուլտուրկամպֆի“ դէմ գործ դրած խիստ միջոցները, և թէ եկեղեցու հետ կռիւ սկզբունքը։ Այդ լրագիրները յաճախ աշխատում էին մինչև անգամ հաւատացնել, որ այդ կռիւը ոչ թէ Բիսմարկն է սկսել, այլ ազատամիտները, որոնց նպատակն է—անհաւատութիւն տարածել ժողովրդի մէջ։ Ինքն իրան հասկանալի է, որ այդ գեղեցիկ խօսքերը գործով չէին հաստատվում, և երբ պարլամենտում հարց էր ծագում կաթոլիկ եկեղեցուն մի որ և է զիջում անելու մասին, այն ժամանակ պահպանողականները հակառակ ձայն էին տալիս, բացատրելով այդ, ի հարկէ, նրանով, որ նրանք, որպէս կառավարութեան կուսակցութիւն, պարտաւոր են պաշտպանել մինիստրութեան կարծիքը։ Իսկ այժմ, երբ Բիսմարկ յայտնի կերպով հաշտվեց Վատիկանի հետ և նրան ամէն տեսակ զիջումներ է անում, երբ խօսում են մինչև անգամ պապի դեսպանի ներկայի գալու մասին, „օրթոդոքսականները“ պրա դէմ կանգնեցին և ընդդիմադրութեան հետ միացան։ Միւս կողմից կուլտուրկամպֆի վերջացնելը հարկաւոր ապաւորութիւն չը գործեց կենտրոնի վրա էլ և երբէք չը հեռացրեց այն անհամձայնութիւնները, որ պատահում էին այդ կուսակցութեան մէջ պարլամենտի նիստի վերջին սեսսիայի ժամանակ։

Կենտրոնի օրգանները անբաւական են նրանով, որ Վատիկանի հետ բանակցութիւնները Բիսմարկ անմիջապէս էր տանում ընդհակառակն, նրանք համարեա ամէն օր կրկնում են, որ „կուլտուրական կռիւ“ վերջացնելը ոչինչ ազդեցութիւն չէ կարող ունենալ կաթոլիկական կենտրոնի պարլամենտական դրութեան վրա, որ նրանք կը շարունակեն իրանց պօլիտիքը ներքին խնդիրների վերաբերութեամբ բոլորովին անկախ կերպով։ Այս բոլոր հանգամանքները բոլորովին անապատելի հետևանք ունեցան՝ այն է համձայնութիւնը ազատամիտների օրգանների, պահպանողականների և կենտրոնի մէջ, որ շեղած փաստ է։

Իշխան Բիսմարկ, ինչպէս երևում է բոլորովին չէ փախեցած այդ նոր դրութիւնից, և իրան յատուկ եռանդով վերջացրեց բանակցութիւնները Վատիկանի հետ։ Արդեօք ի՞նչ էին այդ բանակցութիւնների հետևանքները, ի՞նչ զիջումներ են արել միմեանց, այդ դեռ ևս յայտնի չէ. միայն այսքանը ճիշդ է, որ ապագայում եպիսկոպոսական ազատ տեղերի վրա կը նշանակվեն եպիսկոպոսներ Բերլինի կառավարութեան և Վատիկանի համձայնութեամբ։ Բացի դրանից վճռած է ազատել արգելումից եկեղեցական կոչքերը և վերադարձնել ներքնոց եպիսկոպոսների իրաւասութիւնը, մի և նոյն ժամանակ վճռված է նոյնպէս դիպլոմատիական յարաբերութիւններ կապել Վատիկանի հետ պրուսական դեսպանի միջոցով։

ՆԱՄԱԿ ԹԻՒԻՐԻՒՑԻՑ

Կ. Պոլիս, 24 սեպտեմբերի

Կ. Պոլիս գալու օրից ի վեր «Մշակը» առաջնորդում էր և աջակցում այն ազգակից հարցի յուզման, որ առաջում է անատեսական հարց։ Ձեր տասը տարուայ տաժան գործունէութեան դառնագոյն փորձերով գիտէք արդէն թէ ինչ ասել է տիրացու խմբագիրների հետ գործ և առընչութիւն ունենալը։ Մանելով լրագրական ասպարէզ դրդված ոչ այն պահանջից, որ առաջում է կոչում գրականական և հրապարակախօսական, այլ մղվելով հրապարակ լոկ պատահմունքի, ֆանատգիայի, իսկ այստեղ գլխաւորապէս կաշառաւորութեան հրապուրանքից, հայ լրագրութիւնը մինչև այսօր դեռ մեծ մասամբ չէ հասած իր պաշտօնի և կոչման ամենամիջակ ճանաչողութեան։ Դա է պատճառը, որ մեզ մօտ իւրաքանչիւր օր կը տեսնէք սովորական երևոյթի պէս—մանաւանդ Կ. Պոլսի լրագրութեան վրա—այնպիսի խոշոր զանցառութիւն դէպի կենտրոնական հասարակային հարցեր, այնպիսի պատասխանատուութիւն և արհամարանք դէպի ճշմարտութիւն և գաղափարական յայտնութիւններ, որ մարդ կը մնայ տարակուսած, չը հասկանալով թէ օրն է հայ խմբագիրներին զեկավարող մտաւոր և քարոյական սկզբունքը, օրն է նոցա աշխարհանայեցողութիւնը, օրն է նոցա գործունէութեան պրոգրամը, նպատակը, ուղղութիւնը, հոգին։ Կը տեսնես, օրինակ, այս օր որ ազգի էական շահերը բացարաշ կերպով վնասվում են հասարակութեան ընտրած այս ինչ, այն ինչ սխալ ուղղութիւնից կամ թէ որ և է մի օտարաչա նորամուծութեան պակասութիւնից, կը նկատես այդ պակասութիւնը և կը սկսես յայտնել քո կարծիքդ և առաջարկութիւններդ։ Ինչ կերևայ յանկարծ այն, որի կարևորութիւնը բացայայտ է ամենքի համար, որի ներմուծութեան սոսկալի հետևանքները ճանաչած է ինքը հասարակութիւնը, որի անհրաժեշտ պէտքը ըզգում է և պահանջում ինքը ժողովուրդը, որի մասին փաստաբան կանգնելն անգամ աւելորդ է և ծիծաղելի—կը տեսնես յանկարծ որ հասարակաց շահերի և արամադրութեան արտայայտիչ և զեկավարող լինելու պաշտօնը ստանձնած հայ լրագիրները ընկնեցին այնպիսի լեզու բանեցնելու, այնպիսի ընթացք բռնելու, որ կարծես քո ասածներդ լուսնի կամ արեգակի վրայից առած մի օտարոտի, չը լված և չմացած բան լինեն։ Անկարելի է, անժամանակ է, վաղահաս է, երևակայական է, վընասակար է» և այլն և այլն հարիւր ու մէկ տեսակ դատողութիւններ կը լսես, չը հասկանալով թէ ինչպէս է ընթանում այս մարդկանց ուղեղի գործունէութիւնը, երբ կաթնին սև են ասում, նաֆտին սպիտակ։ Քիչ կանգ կառնես, կընդմիջես և կը թողնես, որ ժամանակ անցնի. մէկ էլ տեսար նոյնը, ինչ «անկարելի» էր, «վաղահաս», «երևակայական» և «վնասակար» քո ասած ժամանակը, այդ մի և նոյնը յանկարծ դառաւ «շատ գործնական», «շատ ազդօգուտ», «շատ պատեհաւոր» և «շատ հեշտ» ինչու։ որովհետև խօսողը հիմայ դու չես, այլ Պետրոսը, քարոզողը դու չես, այլ Կիրակոսը։ Ինքնշիռաղի փառքը, այսպէս ասած, քեզ չէ պատկանում, այլ իրան... Ասեցէք խնդրեմ՝ համապատասխանում է այսպիսի լրագրական ուղղութիւն մի խեղճ, նոր սկսող, նոր վերածնող ազգի անհամար պահանջներին, մեծամեծ ցաւերին, յուզելի և անյապաղ կարդադրելի բազմաթիւ կարևոր և կենսական խնդիրներին, յառաջանալու, ապրելու, ինքնուրոյն կեանք և զարգացում ունենալու ձգտումներին....

Եթէ կայ այդտեղ մի հատ միայն լրագիր այս ուղղութեան հետևող, դրա փոխարէն այստեղ կայ մէյ մէյն մինը. եօթի մէջ, այդ ուղղութեան չը հետևողը. էլ տեսէք թէ որչափ ողորմելի և ցաւելի դրութեան մէջ են խեղճ տաճկահայերի շահերը. որչափ անմխիթար և մռայլ ճանապարհի վրա է տաճկահայերի մտաւոր և բարոյական բարձրման ու վերածնութեան գործը... կայ այստեղ մի հատ լրագիր, որը քառասուն տարիէ ի վեր կառավարում է այստեղ նոյն դերը, ինչ «Մշակը» ուսահայերի մէջ. արծարծել ժողովրդի մէջ թարմ և հանրօգուտ գործնական մտքեր, մտցնել ժողովրդի մէջ ինքնակացութեան և ինքնօգնութեան հոգին, ներշնչել ճանաչողութիւն իր սեփական ազգային արժանապատուութեան և մարդկային անհատական իրաւունքների. ջարդել փրոված հնութիւնը, ստրկացնող հասարակային նախապաշարմունքները, մաշված, պատաւական ընտանեկան և հասարակային դատաստարակութիւնը, հարուածել կեղտը, կեղծը և վատը, մերկացնել և հրապարակս մատակել ծածկված և ստոր երկրեայ խորշերում գլուխը թագկացրած ստութիւնը, խաբէութիւնը և խարդախ արարքները—ահա սակ եղել Մանզումէի էֆքեար լրագրի բոլոր գործունէութեան նպատակը, յատկապրոչ բնաւորութիւնը և կատարած դերը։

Իսկ որն է եղել սորա դէմ բռնած ուղղութիւնը մեսերի կողմից. հետևելը՝ լուել ամենեղ. ուր էլ չը կայ գոնէ մի մատի չափ բան հերքելու և հակաճառելու համար. ծաղրել այնտեղ, ուր յայտնված է այնչափ փայլուն միտք և լայն դաղափար, որի դէմ ոչինչ նսեմացնող առարկութիւն չէ կարելի բերել. խարդախել և մատնել այնտեղ, ուր ժողովրդի համակրութիւնը չէ կարելի խեղդել և նուազացնել ոչինչ ընդդիմադրական յոդուածներով։ Ահա սա է եղած և է մինչև հիմայ «Մասիս» ազգօգուտ լրագրի կատարածը իր 34 տարվայ գործունէութեան մէջ. ինչպէս էք գտնում....

Հիմայ գանք խնդրի և մեր զլխաւոր նիւթի էութեան. Կ. Պոլիս գալու օրից ի վեր, ասեցի, մի քանի հարցերի շարքում սկսեցի քրքրել Մանզումէի մէջ և այն հարցը, որ առաջում է անատեսական։ Այդ հարցը, ինչպէս ձեզ յայտնի է, բնաւ մի նոր բան չէր, այլ արդէն մի քանի տարի առաջ յուզած էր և քարոզած «Մշակը» այդտեղ. իսկ Մանզումէի էֆքեարը, Մամուլ Արեւելեանը այստեղ։ Նորա վրա խօսած էր, թէպէս կցկտուր և տիրացուական անհետևակցութեամբ, նոյնպէս և ինքը «Մասիսը»։ Այս անգամ իմ նախաձեռնութեամբ կրկին անգամ յարուցած այս անլոյծ մնացած հարցի պատճառաւ բացվեցին վիճաբանութիւններ, փաստաբանական և ճարտասանական պայքարներ. զանազան կողմերից դուրս եկան հին և նոր ուժեր, երևան եկան և արծարծվեցին նոր նոր տեսակէտներ, առաջարկութիւններ, պարզ թէ բարդ պլաններ։ Ժողովուրդը սկսեց հետաքրքրվել, շարժվել ու բացարձակ և բուռն կերպով յայտնել իր համակրութիւնը մարտնչող կողմերից մէկին, մինչդեռ այս բոլոր ժամանակ այն լրագիրը, որը պիտի առաջինը լինէր ժողովրդի ցանկութիւնները և արամադրութիւնը արտայայտողը, նա գործ էր դնում բոլոր ջանքերը խեղդել, սպանել և այս անգամ էլ առ միշտ գերեզման գլորել ազգի մի այսչափ էական և կենսական պահանջի խնդիրը, ինչպէս է Հայաստանի ժողովրդի նիւթական և առատական վիճակի բարւոքումը մեր ձեռքին ներած, մեզանից կախված ազգայինս ուժերով։

Բայց բարեբախտաբար բանը հասաւ այնտեղ, որ ժողովրդի բորբոքած արամադրութիւնը և ուժգին արթնութիւնից զրգռված միտքը, նորա մրահամուռ ցանկութիւնը և համակրութիւնը պայթեց ու դուրս ցայտեց այնպիսի բուռն կերպով, որ էլ անհնարին և նաև վտանգաւոր եղաւ դիմադրութիւն ցոյց տալ նորան։ Այդ օրից թէ ինչպիսի մեսամորֆոզա պատահեց ամօթապարտ և սեներևս գտնված «Մասիսի» հետ, կարող էք տեսնել սեպտեմբերի 22-ի նորա համարից, որի մէջ նա խօսում է այնպիսի կերպով, որ կարծես նորա բոլոր մինչև հիմայ ասածները հարկաւոր էր միայն թարս հասկանալ։ Ինչ և իցէ այսչափ դժուարութիւններով վարած դառը տարաբաղդ այնչափ փայլուն յաղթանակ, որ Ներսէս պատրիարքը ինքը եկաւ բեմը նորա շուրջը հաւաքված ամենամեծ նիւթական և մտաւոր ուժերին իր օրհնանքը և քաջալերութիւնը տալու համար։

Ներկայումս նախապատրաստվում է մի մեծ ժողովքի, որը կազմված էր Կ. Պոլսի համայն հայ զորութեան ներկայացուցիչներից, առատական մի մեծ մարմին կազմելու համար, որ առ այժմ կնքվեց առատական մի ուժ հայոց անունով։ Ի հարկէ առ այժմ այս միայն անունն է, որը ճշգրիտ կերպով ցոյց է տալիս թէ առատական որ և է գործի մէջ պատրաստ են միանալ բոլոր հայերը առանց դասակարգի, զարգացման և կրոնութեան խորութեան. իսկ թէ ինչ կերպ և ինչ պրոգրամով պիտի կարողանայ արդիւնաւոր լինել և վստահելի ապագայի ճանապարհ մտնել հայոց միութիւնը Հայաստանի ժողովրդի առատական վիճակը բարւոքելու համար, այդ մասին կը խօսեմ հետևեալ անգամ. յայտնելով ձեզ Մասիսի էֆքեարի խմբագիր պ. Փանոսեանի կազմած այն հզօր և սքանչելի պլանը, որով այսչափ տարվայ մէջ իր գործունէութեան պրոպօզանդայի համար տանջված ու խաչված էր Փանոսեանը։

Մեր յարգելի բարեկամ գոկ. Փեշթիմալչեան շարունակում է աջակցել այն կարևոր խնդրի յուզման ևս, որ վերաբերում է բեռնակիր գաղթականների վիճակին. «Մասիսի» մէջ սկսեցին տարվել նորա յոդուածները համայնքի վրա առողջապահական տեսակէտից. երբ կը վերջանան, կուզարկեմ ձեզ։

Գրիգոր Նիկողոսեան

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Berliner Tageblat» լրագրի վերջին համարներից մէկի մէջ տպված է հետևեալ տարօրինակ յայտարարութիւնը. «Երիտասարդ աղջիկ ազնիւ ծագումն և շատ հարուստ ընտանիքից, գեղեցիկ որպէս Հեղինէ, անտես ոչ պակաս Գինեւրայից, խելօք որպէս տիկին Լաստ, երգում է ուղիղ ժէնին Լինդի նման, պարում է Զէրիտոի նման, պիանօի վրա ածում է, որպէս Բոզա Կատանէը, վիոլօնչէլի վրա որպէս Տերեզիտա Միլանոլլօ, արֆի վրա ածում է Լաբերտանի նման, մոզարիկեան աշխատութիւնները կատարում է Մարիա Օրլէանեան դքսուհու նման, խիստ է որպէս Լուկրէցիան, մեծ կարողութեան տէր է, տղամարդկանց հետ ծանօթութիւն չունենալու պատճառով, լրագրի միջոցով ամուսին է որոնում»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 սեպտեմբերի։ Սեպտեմբերի 29-ին էկսպերտների խորհուրդը որոշեց, այն հիմնարկութիւնները, որոնք կազմում են խմիչքների խանութների ցուցակը խանութատէրերին արանց բացման իրաւունքը տալուց առաջ, պէտք է հոդատէրերի համաձայնութիւնը ստանան խանութի համար վարձատրութեամբ տեղ տալու մասին։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. սեպտեմբերի 4-ի օրէնքի հիման վրա կազմված է առանձին խորհուրդ վարչական աքսորանքի գործերը քննելու համար մինիստրի օգնական Զերեմիսինի նախագահութեամբ, մասնակցութեամբ Սվիբէյնով, Պերվիլով սենատոր անդամների, իսկ ներքին գործերի մինիստրութեան կողմից խորհուրդին կը մասնակցեն Զուրով և Ֆոն-Պլեվէ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 հոկտեմբերի։ Լրագիրները հաղորդում են. սեպտեմբերի 30-ի նիստին էկսպերտները վերջացրին վիճաբանութիւնները յօգուտ խմիչքների հատուկական խանութների։ Բարձրացրած է նոր հարց խմիչքների առևտրի զանազան ձևերի մասին։ Նրանք նախագծեր ընդունած են 25 ձայների մեծամասնութեամբ 4-ի դէմ։ Թոյլ կը տրվին երկու տեսակ խանութներ. մէկը բացառապէս խմիչքները ծախելու խանութից դուրս տանելու համար, իսկ միւսը խանութի մէջ խմելու համար։ Ս. Պետերբուրգ հասան. Շուվալով, Սկոբելև, Տոլստոյն և Ալբեդինսկի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 սեպտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 19 կ., երկրորդ 93 ր. 12 կ., երրորդ 93 ր. 75½ կ., չորրորդ 92 ր. 37 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 224 ր., երկրորդ 218 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 75½ կ., երկրորդ 90 ր. 75½ կ., երրորդ 91 ր., ոսկի 7 ր. 63 կ։ Ուսաց 1 ր. Լոնդոնի վրա արժէ 26 պենս, Ամստերդամի վրա 131 պենս, ուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 221 մարկ 51 պֆ., Փարիզի վրա արժէ 274 ֆրանկ 25 սանտիմ։ Բօրսայի արամադրութիւնը հանդիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ